Հարգելի երաշխավոր,

Վարկային հայտի կամ վարկատեսակի առանձնահատկություններից ելնելով, վարկային կազմակերպությունը կարող է ներգրավել վարկի երաշխավոր/ներ/:

<u>Երաշխավորել վարկը նշանակում է</u>՝ վարկառուի կողմից վարկային պարտավորությունները չկատարելու դեպքում վարկառուի փոխարեն մարել վարկի պարտքը:

Վարկը երաշխավորելու նպատակով Վարկային կազմակերպության, վարկառուի և երաշխավորի միջև կնքվում է երաշխավորության պայմանագիր:

<u>Վարկային կազմակերպությունը պարտավոր է՝</u>

- Վարկառուի կողմից Վարկային պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարելու դեպքում 3 /երեք/ աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել Երաշխավորին՝ նշելով պարտավորության խախտման ժամկետը և առկա պարտավորության չափը,

- Երաշխավորին տրամադրել վարկային, երաշխավորության պայմանագրերի և մարման գրաֆիկի մեկական օրինակներ,

- Երաշխավորին 7 /յոթ/ օր առաջ ծանուցել իր երաշխավորած վարկի պայմանագրի պայմանների փոփոխության մասին:

<u>Երաշխավորը իրավունք ունի՝</u>

- Ցանկացած ժամանակ վարկային կազմակերպությունից պահանջել տեղեկատվություն վարկի մնացորդի չափի մասին,
- Վարկառուից հետ ստանալու իր կողմից վարկի համար վճարած գումարները, ինչպես նաև վարկառուի փոխարեն կրած այլ վնասները:

Վարկառուի կողմից պարտավորությունները չկատարելու և վարկը ժամկետանց դառնալու դեպքում **<u>վատանալու է նաև երաշխավորի վարկային պատմությունը</u>**, ընդհուպ երաշխավորը կարող է զրկվել իր գույքից: